Բաց դասի պլան 16.11.2022

Առարկա՝ Մաթեմատիկա

Դասարան՝ 6-րդ

Ուսուցիչ՝ Ծ. Մանվելյան

Դասի թեման՝ «Ամբողջ բացասական թվեր»

Դասի տիպը՝ Նոր թեմայի հաղորդման դաս (ինտեգրված դաս)

Դասավանդման մեթոդը՝ ԽԻԿ

Դասի ակադեմիական նպատակները՝

- Տալ բացասական ամբողջ թվի սահմանումը
- Ծանոթացնել նրանց գործնական կիրառությունների հետ
- Նշել բացասական թվերի կիրառության ոլորտները

Ուսումնական ակնկալիքները՝

- Իմանան ամբողջ թվերի սահմանումը
- Տարբերեն դրական և բացասական ամբողջ թվերը
- Իմանան նրանց կիրառության ոլորտները

Դասի կահավորումը՝

- Համակարգիչ
- Պրոյեկտոր, էկրան
- Սահիկաշար
- Գրատախտակ

Դասի ընթացքի նկարագրություն՝

Խթանման փուլ՝

1. Ո՞ր թվերն են կոչվում բնական թվեր՝
2. Ո՞րն է ամենափոքր բնական թիվը՝
3. Նշել 2-ի նախորդ և հաջորդ թվերը՝

4. Նշել 1-ի նախորդ և հաջորդ թվերը։

Հարցեր ԿԱՊԿՈՒ աշակերտներին.

- Նշել որևէ բնական թիվ և ասել ո՞րն է նրա հաջորդը։

Նոր թեմայի հաղորդում։

1. Ծանոթացնել բացասական ամբողջ թվերի հետ։
2. Ծանոթացնել բացասական թվերի գործնական կիրառությունների հետ։
3. Նշել, որ բացասական թվերը հարմար է օգտագործել այն դեպքերում, երբ դիտարկվող մեծությունը փոփոխվում է երկու հակադիր ուղղություններով։
4. Նշել, որ բացասական թվերն օգտագործելիս պետք է նշել զրոյական կետը։
5. Ծանոթացնել օդի ջերմաստիճանի փոփոխության գրաֆիկի հետ։



6. Զրոյական կետը սառույցի հալվելու ջերմաստիճանն է։
7. Նշել, որ երկրի ռելիեֆի բարձրություններն ու իջվածքները նշելու համար օգտագործվում են դրական և բացասական թվերը։



8. Զրոյական կետը ծովի մակերևույթն է։
9. Ծանոթացնել առևտրական գործունեության ընթացքում առաջացող եկամուտների և ծախսերի (բացասական եկամուտ) հետ։

Կրպակի մեկ շաբաթվա եկամուտների մատյանում գրված է.

Օրը	երկուշաբթի	երեքշաբթի	չորեքշաբթի	հինգշաբթի	ուրբաթ	շաբաթ
Եկամուտը (դրամ)	5000		0	4000		3000
Կորուստը (դրամ)		1000	0		500	

Բացատրեք այս գրառումների իմաստը և որոշեք կրպակի շաբաթվա եկամուտը։

Իմաստի ընկալման փուլ։

Դասարանում լուծել 386, 389 բ, դ, 390, 393 գ, դ



Կշռադատման փուլ

1. Ամբողջ թվեր կոչվում են ...
2. Առանձնացնել դրական և բացասական ամբողջ թվերը

-7, -15, 27, 56, -3, -8, -1, 14, 0, 67, -21

Տնային աշխատանք

388, 389 ա, գ, 393 ա, բ: